ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը, **ամսաթիվը և ժամը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2020/89, 03.08.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ բժշկական սարքավորման ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, վերջինիս կողմից «ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հայտարարության մասին հրավերում կատարել փոփոխություններ կամ չեղարկել մրցույթը՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցություն:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ ք. Երևան, Մելիք Ադաման 1, ՀՀ Ֆինանսների նախարարություն

Բողոք բերող անձ՝

«Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ալեքսանդր Հարությունով

Հասցե՝ ք. Երևան, Դ. Դեմիրճյան 40

info@siemtech.sk

հեռ. +374 11800700
091382888
055003033

Պատվիրատու՝

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13

Հեռախոս 0285 2 85 96; 098 11 22 79

Էլ. փոստ kapanhospitalgnumner@mail.ru

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորման ձեռք բերում

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1

Բողոք

1. Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական սարքավորման՝ համակարգչային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարել է *ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1*_ծածկագրով հրապարակ բաց մրցույթի մասին հայտարարություն 1 չափաբաժնով.

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Համակարգչային տոմոգրաֆ

Սույն չափաբաժնի տեխնիկական բնութագրի մեջ դրված են այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են բացառապես **CANON AQUILION**

ԱՌԽԱՏԱԿԱՐԱՆ
ՄՏԻԲ N Վ-29856.2
5 «03 08 2020թ.

LIGHTNING 16/32 համակարգչային տոմոգրաֆի տեխնիկական նկարագրին. վերջինիս տվյալները կարող եք տեսնել հետևալ կայքում. *https://medpribor.pro/product/canon-aquilion-lightning/*

Հրավերով սահմանված պահանջները հակասում են ՀՀ Գնումների օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին և 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 22-րդ կետի դրույթներին

Հոդված 3.

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

526-Ն որոշման 22-րդ կետ

22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

2. Բողոքի պահանջը

Կիրառել ՀՀ Գնումների մասին օրենքով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման դրույթներով, ֆինանսների նախարարի 2018թ. -ի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով, ինչպես նաև Գնումների մասին ՀՀ օրենսդրական այլ իրավական ակտերով նախատեսված բոլոր անհրաժեշտ քայլերը՝

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հայտարարության մասին հրավերում կատարել փոփոխություններ կամ չեղարկել մրցույթը՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցությունը:

Կից ներկայացնում ենք՝

1. Բողոքարկման վճարի վճարման անդորրագիրը,
2. «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի տնօրեն Ալեքսանդր Հարությունովի անձնագրի պատճենը,
3. «Սիմենս» բժշկական սարքավորումներն արտադրող ընկերության պաշտոնական նամակը խնդրո առարկայի վերաբերյալ,
4. **ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1** ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը

31.07.2020թ.

ստորագրություն

«ՍԻՄՌԱՅՍ ՄԵԴԻՔԱԼ ՍՓԼԱՅ» ՍՊԸ
"СИМРАЙЗ МЕДИКАЛ СПЛАЙ"
"SIEMRISE MEDIKAL SUPPLY"
02264261